



*Համարը N 70-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2018.02.07/9(1367) Հոդ.137
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 17.02.2018*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 01.02.2018
Ստորագրման ամսաթիվը 02.02.2018
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1109-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 փետրվարի 2018 թվականի N 70-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1109-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի «Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու, գործառույթների իրականացումն օպերատորին պատվիրակելու, գործառույթների ցանկը հաստատելու, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանելու մասին» N 1109-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) 2-րդ կետը «առաջադրվող պահանջները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ պետական մարմինների հետ պայմանագիր կնքելու պահանջը: Պետական մարմինների որպես օպերատոր հանդես գալու դեպքում իրավահարաբերությունները կարգավորվում են համապատասխան մարմինների ղեկավարների համատեղ հրամանով՝ հիմք ընդունելով սույն որոշման N 3 հավելվածով սահմանված պետական մարմինների և օպերատորի միջև կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի պահանջները» բառերը.

2) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ և 9-րդ կետերով.

«8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

9. «Մոբի Դրամ» փակ բաժնետիրական ընկերություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

2018 թ. փետրվարի 2
Երևան